ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 07/21/1054-2023
«07» 02 2023թ.

«ՊՐՈ ՄԱՔ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ ԴԱՎԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Գրիգորյան,

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և «Պրո Մաք» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01248819) միջև 2019 թվականի դեկտեմբերի 09-ին կնքված N «ԲՏԱՆ-ՄԱԱՇՁԲ-19-13» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն, Ձեր ընկերությունը պարտավոր էր սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել «**Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական**» աշխատանքներ»՝ (այսուհետ՝ Աշխատանք) համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող N 1 Հավելվածով ներկայացված գնման ժամանակացույցի և N 2 հավելվածով ներկայացված տեխնիկական բնութագրի:

Համաձայն Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի՝ պետք է մինչև 25.10.2020 թվականը Կատարողի կողմից հանձնվեր երկրորդ փուլի, մինչև 15.12.2020թ. երրորդ փուլի արդյունքները, որոնք մինչ օրս կատարված չեն (աշխատանքները՝ այդ թվում փուլային, պատվիրատուին չեն հանձնվել):

Համաձայն Պայմանագրի 6.2 կետի՝ Կողմերից որևէ մեկի միակողմանի հրաժարման դեպքում մեղավոր կողմը փոխհատուցում է մյուս կողմի բոլոր վնասները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Նույն Պայմանագրի 6.5 կետի համաձայն՝ կատարողը պատվիրատուի առջև պատասխանատվություն է կրում գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3/3, հեռ. (37410) 590009, էլ. հասցե՝ narek.melkumyan@hti.am

աշխատանքների կատարման պայմանագրի խախտման համար, եթե չի ապացուցում, որ նման խախտումն առաջացել է իր մեղքից անկախ հանգամանքների հետևանքով և սույն պայմանագրով նախատեսված աշխատանքը չկատարելու դեպքում վերադարձնում է պատվիրատուի կողմից տրված կանխավճարը և առանձին փուլերով կատարված աշխատանքների դիմաց վճարված գումարը, ինչպես նաև վճարում է տուգանք պայմանագրի գնի 0,5 %-ի չափով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, հիմք ընդունելով 2019 թվականի դեկտեմբերի 09-ին կնքված N «ԲՏԱՆ-ՄԱԱՇՁԲ-19-13» գնման պայմանագրի 2.1.5 կետի ա) և բ) ենթակետերը **2023 թվականի փետրվարի 07-ից մասնակի միակողմանի լուծում է վերոնշյալ պայմանագիրը:**

Տեղեկացնում ենք, որ «Պրո Մաք» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 10 (տաս) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական «900005570115» հաշվեհամարին վերադարձնել (վճարել) տրամադրված կանխավճարից՝ 70,600,000 (յոթանասուն միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ գումարը, տուգանքը՝ պայմանագրի գնի 0,5 %-ի չափով՝ 828,000 (ութ հարյուր քսանութ հազար) ՀՀ դրամ գումարը, նույն ժամկետներում վճարել գանձապետական «900005028106» հաշվեհամարին, իսկ Պայմանագրով նախատեսված տույժերը՝ 19,962,000 (տասնինը միլիոն ինը հարյուր վաթսուներկու հազար) ՀՀ դրամ գումարը վճարել գանձապետական «900005028106» հաշվեհամարին:

Պայմանագրով նախատեսված տույժերի չափերն են.

2-րդ փուլ՝ 25.10.2020թ.-06.02.2023թ. ընկած ժամանակահատվածի համար, որը կազմում է 576 աշխատանքային օր: Տույժի հաշվարկը կազմել է 14,400,000 (տասնչորս միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ (50 000 000 x 0.05% x 576),

3-րդ փուլ՝ 15.12.2020թ.-06.02.2023թ. ընկած ժամանակահատվածի համար, որը կազմում է 540 աշխատանքային օր: Տույժի հաշվարկը կազմել է 5,562,000 (հինգ միլիոն հինգ հարյուր վաթսուներկու հազար) ՀՀ դրամ (20 600 000 x 0.05% x 540):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարկ ենք համարում նաև նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի

33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը սահմանված կարգով կհրապարակվի www.procurement.am պաշտոնական տեղեկագրում:

2/7/2023

X

ՆԱՐԵԿ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by MELKUMYAN NAREK 31114850200 ՆԱՐԵԿ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Գնումների բաժին
010 59 00 47